

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍ ԿԼԱՍԻԿ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Դիմուքայինների Ակադեմիայի
1949 թ. № 2 «Տեղեկագրից»

89199(09) [P. 100] 27569

U-73 | K. 100, 100, 100.

Հովհ. Քանդակար և ուրիշ արվեստ-
ընթացիկ:

1/4	3/12 57	11

881.55.092 [Թումանյան]

Ա-73

1949

Ա. Առաքյոն

891.71.09

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍ ԿԼԱՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Բանաստեղծի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Թումանյանի դրական ու հասարակական գործունեության մեջ գերիշխող և ուղեցույց դադափարը՝ ռուս և հայ ժողովուրդների պատմական քաղաքացիական պաշտպանն է, դարերի փորձով հաստատված այն ճիշտ համոզմունքը, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը փրկության միայն մի հուսալի հենարան ունեն՝ հանձին Ռուսաստանի, ռուս մեծ ու հզոր ժողովուրդի:

Բայց Ռուսաստանը, ռուս ժողովուրդը Թումանյանը չէր դիտում իբրև միայն քաղաքական գործոն, որը բախտորոշ նշանակություն ունի հայ ժողովուրդի ինքնուրույն ազդային գոյության պահպանման համար:

Թումանյանը բախտորոշ էր համարում ռուսական մեծահարուստ կուլտուրայի նշանակությունը հայ ազգային կուլտուրայի ու գրականության բարձր զարգացման, նրանց առաջընթացի համար: Նա նկատի ուներ հայ կուլտուրայի ու գրականության զարգացման, փորձը և Աբովյանից սկսած մինչև իր ժամանակը, ներառյալ և փրեն ու իր ստեղծագործությունը:

Նա ելնում էր այն իրողությունից, որ ոչ միայն ինքը, այլ և իր նախորդներն ու ժամանակակիցները, հայ կուլտուրայի, արվեստի ու գրականության լավագույն ներկայացուցիչներն իրենց մտավոր զարգացումով ու ստեղծագործությամբ սերտորեն կապված են ռուսական կուլտուրայի հետ, իրենց հոգևոր սնունդը ստացել են ռուսական գեղարվեստական մտքի բարերար ազդեցությամբ:

Թիֆլիսում (1916 թ. հունվար) Հայկական պոեզիայի մասին Վ. Բրյուսովի կարգացած զեկուլցման առթիվ արտասանած իր ուղջունի խոսքում՝ Թումանյանը ասում է.

«... Սիրով ու պատկառանքով խոնարհում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականությանն առջև՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր զրուդները ու մտավորականները շատ շատերը»¹

Այդ շատերի թվումն էր և ինքը Թումանյանը, որի կյանքի ու ստեղծագործության սերտ առնչությունը ռուսական կուլտուրայի ու գրականության հետ, հայ-ռուս գրական-կուլտուրական կապերի զարգացման պատմության ամենացայտուն էջերից մեկն է:

¹ «Թումանյանը քննադատ», 1960 թ., էջ 337:



1902 թվի հոկտեմբերին Թումանյանը սուս զրականությունից իր կրած ազդեցության մասին գրում է հետևյալը.

Սինչև Ձեր նամակի ստանալը ես չէի մտածել այն մասին, թե ես որքան էմ եղած ուսուցչ գրականության ազդեցության տակ: Ձեր նամակն ստանալով՝ Լրկար մտածեցի ու որոնեցի ուսուցչ գրականության ազդեցությունը, բայց ոչ թե իմ ուսանավորների տոգելում— որովհետև երբեք գիտությանմ հետեւած ու նմանած չեմ ոչ մի բանաստեղծի, այլ իմ հոգու, զրական հաշակի ու հայացքների վրա¹:

Այնուհետև նշում է, որ «նույնիսկ զեռ դպրոցական տարիներին հետաքրքրությամբ կարդացել է «սուս բանաստեղծների դսրծերը, որոնք «այնքան սիրելի են եղած միշտ՝ իրեն համար, որ զրանցից մի քանիսը թարգմանել է «այլերեն (այդ իր թարգմանածներից հիշատակում է Լերմոնտովի «Мцыри», «Ангел», «Желание», «Я не хочу чтоб свет узнал», Պուշկինի՝ «Утопленник», «Песнь о вещем Олеге», «Закливание», «Романс»).

Թումանյանը մանրամասն թվարկում է Պուշկինի ու Լերմոնտովի այն բանաստեղծություններն ու պոեմները, որ նա «դպրոցում սովորած, թե դպրոցից դուրս կարդացած» է եղել (Պուշկինի «Буря мглою небо кроет», «Полтава», «Цыганы», Լերմոնտովի՝ «Демон», «Ангел», «Ветка Палестины», «Песня про царя Ивана Васильевича», «Мцыри», «Спор», «Три пальмы», «Пророк» և այլն) և որոնք «անշուշտ ազդած պիտի լինեն ինձ վրա»,— ասում է Թումանյանը:

Բայց ավելին ասեմ: Թուսաց բանաստեղծները— զլսավորապես Լերմոնտովը և ապա Պուշկինը միշտ ինձ ավելի հարազատ են լվացել, քան թե մեր հայոց բանաստեղծները,— հայտարարում է Թումանյանը:²

Թուս մեծ բանաստեղծների նկատմամբ ունեցած այդ անհուն սիրտ միջոցով էլ Պուշկինն ու Լերմոնտովը (և ոչ միայն նրանք) խորը ազդեցություն են ունեցել Թումանյանի վրա: Բայց այդ ազդեցությունը ոչ թե մեխանիկական է և արտահայտվում է ոչ թե արտաքին նմանությունների ու փոխառությունների ձևով, այլ ներքնապես, ստեղծագործական հոգեբանությամբ: Դա արտահայտվում է զրականության ու կյանքի, բանաստեղծի ու ժողովրդի միջև եղած կապի ու փոխհարաբերության խնդրում, զրոզի ըմբռնման մեջ, նրա զրական-դեղարվեստական հայացքների ու ճաշակի մեջ:

«Այսպիսով,— գրում է Թումանյանը, թեև անդիտակից կերպով, ես սկսել եմ ուսուցչ բանաստեղծների ազդեցության տակ: Բայց այդ կատարվել է այնքան աննկատելի... որ ես այժմ չեմ կարող մասս զնել ու ցույց տալ նրանց ազդեցությունն իմ առանձին ոտանավորներում, այլ զգում եմ իմ սրտի, իմ ճաշակի. իմ բարոյական ամբողջությամբ վրա»:³

Թումանյանը խոստովանում է, որ իր՝ որպես բանաստեղծի հետաքրքրությունն ու սերը զեպի հայրենի բնությունը և ժողովրդի էթական կյանքն ու տվանդությունները նա սովորել է ուս մեծ բանաստեղծներից՝ առավելապես Լերմոնտովից ու Պուշկինից՝ զեռ իր պատանեկության ու Լերտաժարության

«Թումանյանը բնագրաւ», 1939 թ., էջ 96: Բոլոր զեպերում ընդգծումները մերն են: Ա. Ա.

¹ Նույն տեղ, էջ 96:

² Նույն տեղ, էջ 100:

տարիներին՝ նա զարմանքով ու հիացմունքով է նկատել, որ իր հայրենի Կովկասի բնությունն ու ժողովրդի կյանքը շատ ավելի լայն ու խորը կերպով, պատկերված են ուսու բանաստեղծների երկերում, բան իր նախորդ շրջանի հայ բանաստեղծներ Ս. Շահազիզի ու Ռ. Պատկանյանի, որոնք ապրելով հայրենիքից հեռու, չեն պահել հայրենի բնության բույրն ու հրապույցը և չեն երգել այն։ Մինչդեռ, նկատում է Թումանյանը, «ոչ ուս բանաստեղծը սիրել ու երգել է Կովկասի լեռներն ու լեռների կյանքը»։ «Նա էլ իբրև Կովկասցի ու լեռնցի, սիրել էմ այդ երգերն ու պոեմները։ Նվ թևակտ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ևս ունեցել էմ իմ հոգում, բայց անշուշտ նրանք (իմա՝ Պուշկինն ու Հերմանովը, Ա. Ա.) դուրս էն ինձ ու ավել պոեմայի այն ձևը, որով զրել էմ ևս, որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմա չի եղել, որ երգեր մեր բնությունը, ժողովրդի սովորություններն ու ավանդությունները»։¹

2

Թուս մեծ բանաստեղծներից Թումանյանը խորը սիրով ու պատկառանքով է արտահայտվում առանձնապես երկուսի՝ Ալ. Պուշկինի ու Մ. Լերմոնտովի մասին, ըստ որում Պուշկինին նա համարում է ամենամեծ բանաստեղծը, թե ուս, և թե համաշխարհային գրականության մեջ։

«Թուս ժողովուրդը մեծ ժողովուրդ է, թարմ, առողջ, հսկա ժողովուրդ, հարուստ ու հոյակապ գրականություն ունի և էլ գրականության մեջ իր երսկան— Պուշկինը»,— ասում է Թումանյանը։²

Մի այլ առիթով խոսելով Պուշկինի մասին, Թումանյանն ասում է. «Թուս բանաստեղծներից ամենամեծը Պուշկինն է. նվիրվալով նման մեծ բանաստեղծ չկա. Բայրոնը կրակոտ է, կրքոտ, իսկ Պուշկինը հավասարակշռված գեղարվեստագետ է, մեծ բանաստեղծ»։³

Բազմաթիվ այլ առիթներով էլ, երբ խոսք է եղել Պուշկինի մասին, Թումանյանը միշտ նույն բարձր կարծիքն է հայտնել ուսական պոեզիայի առ համաշխարհային փառքի վերաբերմամբ, բայց չուրովի է մեկնաբանում նրա մեծությունն ու հանճարեղությունը, իբրև խորապես ռուսական ազգային բանաստեղծ։

«Պուշկինը մեծ բանաստեղծ է, խոշոր, հոյակապ բանաստեղծ, ուրք հաստատություն ունի և դեղեցիկ ճաշակ։ Սիրում էմ կարգալ նրա պոեմները՝ „Полтава“, „Цыганы“, „Кавказский пленник“ և մյուսները։ Բայց նրա գրվածքներից գիտե՞ք որն էմ ամենից շատ սիրում, իսկի չեք կարող երևակայել... „Зимний вечер“—ը։ Սիրում էմ էլ դ բանը, որովհետև գերազանցումն ուսական է, շատ է սիրուն ու հաջող»։⁴— ասում է Թումանյանն իր վերջին տարիների գրույցներից մեկում ու պատմում, որ իր այդ կարծիքը նա հայտնել է նաև Կորոլենկովի հետ ծանոթանալիս, երբ վերջինս զրույցի ժամանակ հարցրել է Թումանյանին, թե՞ Պուշկինի գրվածքներից ո՞րն է ամենից ավելի ուժեղ տպավորություն թողել նրա վրա և ո՞րն է նա ամենից շատ սիրում։

¹ «Թումանյանը քննադատ» էջ 100։

² «Ա. Պուշկինին, հոգվածներ և նյութեր», 1937 թ. էջ 261։

³ «Ա. Պուշկինին» էջ 262։

⁴ Նույն տեղ, էջ 267։

Թումանյանի հետաքրքրությունն ու սերը ուսու կուլտուրայի ու գրականության նկատմամբ արտահայտվում է նաև նրա գեղարվեստական թարգմանությունների բաժնում, որտեղ նշանակալից տեղ են գրավում ուսու բանաստեղծները և ուսական ֆոլկլորը:

Ուշագրավ ու բնութագրական է այն, որ Թումանյանին ամենից առաջ և ամենից ավելի գրավում են Ա. Պուշկինն ու Մ. Լերմոնտովը: Ռուսական բանաստեղծական մտքի աչիւ Երկու խոշորագույն ներկայացուցիչները միշտ ուղեկցում են Թումանյանին՝ նրա ստեղծագործական կյանքի առաջին բայելերից սկսած մինչև վերջը:

Պուշկինից նա թարգմանել է «Օլեգի երգը» և «Ջրահեղձը» բալլադները (1890), «Ռեմանս» (1892), «Ձմեռվա իրիկուն» (1909), բանաստեղծությունները և «Ազատության» («Вольность») օղայի նշանավոր քառյակը («Ատում եմ բեզ և ըռ դահը») Ստ. Շահումյանի հանձնարարությամբ:

Լերմոնտովից նա թարգմանել է՝ «Ես չեմ ուզում...» (1892), «Հրեշտակ» (1894) լիրիկական բանաստեղծությունները և ապա նշանավոր «Մծիրի» պոեմը (1896):

Իսկ Թումանյանի, ազատիվ հետաքրքրությունն ու թարգմանական աշխատանքը ուսական պոեզիայի դժով չի սահմանափակվում Պուշկինի ու Լերմոնտովի ստեղծագործությամբ: Նա թարգմանել է նաև Ժուկովսկույ («Աթլիլես»), Նեկրասովից («Մալը»), Ա. Կոլցովից («Գեղջուկի մտածումներ»), Ալ. Բլոկից («Մոլի երգը»), Մ. Գորկուց («Վալսական լեզենդ») և այլն:

3

Ի թիվս այլ հոգվածների ու նամակների, որոնց մեջ Թումանյանը խոսում է Պուշկինի ու Լերմոնտովի մասին, — առանձնապես ուշագրավ և արժեքավոր է Լերմոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ (1914 թ.) գրված նրա հոգվածը:

«Վովկասի մեծ որդեգիրը» բնորոշ վերնագիրը կրող այդ հոգվածը հետաքրքրական ու շատ արժեքավոր է ոչ միայն այն առումով, որ այնտեղ արտահայտված է հայ մեծ բանաստեղծի անհուն սերն ու հիացմունքը ուս հանձարեղ բանաստեղծների նկատմամբ, ոչ միայն նրանով, որ Թումանյանը նորից ու նորից առանձնապես նշում է Պուշկինի ու Լերմոնտովի ստեղծագործության հարազատությունը Կովկասի ժողովուրդների, այդ թվում և հայերի համար, այլ նաև նրանով, որ այդ հոգվածը բացահայտում է Թումանյանի, որպես ազատասեր դեմոկրատ բանաստեղծի խորին համակրանքը՝ Պուշկինի ու Լերմոնտովի անուններով ներկայացվող պրոգրեսիվ Ռուսաստանի ու ուս կուլտուրայի նկատմամբ, ի հակադրություն «կապույտ մոնղոլների» չինովնիկական-ոստրիկանական Ռուսաստանի, ինչպես արտահայտվում է Թումանյանը՝ մեջ բերելով Լերմոնտովի հայտնի բանաստեղծության արտահայտությունները:

Ճիշտ է, որ պրոգրեսիվ ու ցարական-չինովնիկական Ռուսաստանի հակադրությունը Թումանյանի մոտ չի հասնում ռեալիստներ ըմբռնման մակարդակին, բայց որ այդ հակադրությունն զգալի է նրա այս և այլ հոգվածներում ու նամակներում, — դա անմիտելի է: Համենայն դեպս Թումանյանը խորապիսի գիտակցում է, որ Պուշկինն ու Լերմոնտովը, ինչպես և Գրիբոեդովը,

(որին նույնպես հիշում է իր այս հոգվածում), իրենց ժամանակի ցարական Խուսաստանի ռեակցիոն միջավայրի զոհերն են:

Լեռնոնտավի մասին Թումանյանը գրում է, որ նա ծնվեց որպես աղատա-
սեր բանաստեղծ, հակադրված իր միջավայրին ու ժամանակին, «ծնվեց հրե-
զին ու վերասլաց մի հոգով, որ դեռ մանկուց շնաշխարհիկն էր որոնում՝ հա-
րյուր տարի առաջ եղած Ռուսաստանի միջավայրում, չիճովնիկական մոնղի-
րի մեջ ամուր սեղմած ու չորացած մի կյանքում ու կատարվեց մեծ դրաման»:
Թումանյանը նշում է, որ «Լեռնոնտովն էլ ունեցավ իր մեծ բնկերի— Պուշկին-
նի ճակատագիրը»,¹ նույն ողբերգական վախճանը, որպես հետևանք նրանց
նկատմամբ եղած հետապնդման ու հալածանքի՝ իրենց իսկ սիրած ու փոռա-
րանած հայրենիքում:

«Բայց ինչո՞ւ Լին նրանք հալածված իրենց հայրենիքում: Մի՞թե իրենց
հայրենիքը չէին սիրում: Մի՞թե Լեռնոնտովը իր հայրենիքը չէր սիրում»,—
հարցնում է Թումանյանը և ապա նշում որու մեծ բանաստեղծի անձնուրաց
հայրենասիրությունը, որը տարբերվում էր «կապույտ մոնղիրավորների»
«հայրենասիրությունից»:

«Սիրում էր, այո՛,— հատով շեշտով ասում է Թումանյանը,— բայց
«տարօրինակ սիրով, ո՛չ էն սիրով, որ սիրում էին մնացած շատերը»,— աս-
ում է Թումանյանը. «Իսկ էն «տարօրինակ» սերը, սրով սիրում էր, և որը
չէր մկրտում ոչ մի անունով, սակայն՝ շռայլորեն փռում էր իր երկերում ու եր-
գերում, ոչ հասկացող կար, ոչ գնահատող: Կյանքի սասարեզը բռնած էին
ոչնչությունները, և կամ նրանք, որոնց մասին ասում է՝ «իրենց սրկիպի սիր-
աբ ծածկած էին մունդիրով»: Հասկացող, գնահատող հասարակություն չկար,
և «տարօրինակին» հազարավոր աչքերով հետապնդում էին, հազարավոր ձեռ-
քերով մերժում, բշտում էին իրենց շրջանից: Մի շրջան, որից Պուշկինն ուզում
էր մինչև Զինաստան մին փախչի, որից զգված Գրիբոեդովը Պարսկաստան
ընկավ...»

«Էս ամենի վրա,— շարունակում է Թումանյանը Լեռնոնտովի ապրած
«մեծ դրամայի» մասին,— ավելացավ և է՛ն ամենամեծ վիշտը, որ Լեռնոնտո-
վը ունեցավ իր կյանքում: Նա պաշտում էր Պուշկինին և տեսավ Պուշկինին...
բամբաստված ու գնդակահար Ուստաց մի հրաթափ, մի անհուն զայրույթով,
որի անունն է «На смерть Пушкина», ամբողջ Ռուսաստանի երեսին նախա-
տինքի ու դատապարտության էն տեսակ խոսքեր չպրտեց, որ մինչև էլ օրը
Ռուսաստանը չէր տեսել, ու սրանով ամեն բան լրացավ:

Պետք է հեռանալ:

Հեռացավ՝ մնաա բարով ասելով «տերերի ու ստրուկների Ռուսաստանին,
կապույտ մոնղիրներին... Գուցե, ասավ, էնտեղ, Կովկասի սարերի ետեր կա-
րողահամ ծածկվել քո ղեկավարների ամենատեսա աչքերից ու ամենալուր ա-
կանջներից»:²

Այդպես հալածված իրենց սիրելի հայրենիքում Պուշկինն ու Լեռնոնտովը
հեռանում, դալիս են «դեպի հարավ», որտեղ «նրանց խոցված... սրտերին
հեռվից, ամպերի միջից առողջ ու պայծառ ժպտացին Կովկասի ձյունափառ
զապաթները՝ հոյակապ ցնորքների նման» և «նրանք էլ իրենց հոգու ամբողջ

¹ «Թումանյանը բննագրա», էջ 320 («Կովկասի մեծ օրգանի»):

² «Թումանյանը բննագրա», էջ 321:

ուժով ու աշխույժով փաթաթվեցին Կովկասին, որդեգրվեցին Կովկասին ու ախպերացման մեղ — Կովկասցիներին»¹

Հոգիվածի փերշում Թումանյանը հույս է հայտնում, որ սկսված պատերազմից հետո «եթե փառ Լեւոննտովի հարյուրամյակի կատարման օրը... մենք Կովկասցիներս, կտոնենք այն իբրև ոչ միայն մի մեծ ռուս բանաստեղծի տոն, որին, ինչպես և առհասարակ ռուս գրականությանը, շատ բան ենք պարտավակ, այլև, որպես մի բանաստեղծի, որ հոգով հարազատ է մեզ, որ մեր բնիկանուր մոր՝ Կովկասի սանձման որդեգիրն է, որ դեռ մանուկ օրերից երկինք ու Կովկասի կապույտ սարերը միասին է երազել»²

4

Թումանյանը մեծագույն հարգանքով ու սիրով է արտահայտվում ռուս հանճարեղ քննադատ՝ սեդուցիոն-դեմոկրատ Վ. Բելինսկու մասին, իբրև գեղադիրտական ու քննադատական մտքի անստարկելի հեղինակության ու մեծության:

Ա. Պուշկինն իբրև հանճարեղ բանաստեղծ, Վ. Բելինսկին իբրև հանճարեղ քննադատ-գեղագետ՝ Թումանյանի համար մեծագույն հեղինակություններ են, որոնցից նա շատ է սովորել՝ մեկից՝ խոսքի արվեստ, ստեղծագործական վարպետություն, մյուսից՝ գրականության ու արվեստի փիլիսոփայություն, արվեստի ու գրականության հասարակական նշանակության իմաստավորում, գրողի ու գրական ստեղծագործության արժեքավորման ու գնահատման գեղադիրտական ճաշակ և իմաստություն: Ըստ որում բնորոշ է, որ Բելինսկու անունը մի քանի անգամ Թումանյանի հոգիվածներում ու նամակներում հիշատակվում է մեծ մասամբ Պուշկինի և գրականության ժողովրդանությունից հարցերի առնչությամբ: Անկասկած է, որ Թումանյանը Պուշկինի, որպես ռուս հանճարեղ ժողովրդական ազգային բանաստեղծի մեծությունը, նրա արվեստի վեհությունն ու նշանակությունը խորապես բմբռնել, գիտակցել է՝ լատկապես Բելինսկու աշխատությունների շնորհիվ: Իսկ որ Թումանյանը մեծ հետաքրքրությամբ կարդացել, ուսումնասիրել է ռուս հանճարեղ քննադատի ու գեղադիրտի երկերը, այդ մասին վկայություններ կան Թումանյանի նամակագրության մեջ: Ուշագրավ է, որ Վ. Բելինսկու նկատմամբ Թումանյանի հայտնաբերած հետաքրքրության տարիները (1900-ական թվերի սկիզբից) զուգադրվում են նրա ստեղծագործական կյանքի ամենաբեղուն շրջանին, երբ նա փերամշակել ու կատարելության էր հասցրել «Անուշը», «Պեետն ու Մուսան», «Սարսն», «Ղուկից Սաբոն», գրել ու կատարելագործել է իր մյուս պոեմները («Մաստեցի Դավիթը», «Թմկաբերդի առումը» և այլն):

1904 թվին գրած իր նամակներից մեկում Թումանյանն ասում է. «Այս օրերում կաղում էի Բելինսկու հոգիվածները»³: Թե ո՞ր հոգիվածների մասին է խոսքը, նա կոնկրետ չի ասում: Բայց ուշագրավ են այն տպավորությունները, որ ստացել է Թումանյանը մեծ քննադատի հոգիվածների բնթերցումից:

«Տե՛ր աստված, ինչ դարմանալի նման են ազգերն իրար, ինչքան նման

¹ «Թումանյանի քննադատ», ԼՂ 321:

² Նույն տեղը:

³ Հոգիվ. Թումանյան «Երկերի ժողովածու» հ. V, ԼՂ 282:

են ազգերի կյանքի որոշ շրջաններն իրար»,— դրամ է Թումանյանը Բելինսկու հոգևածաների ընթերցման տպավորության տակ:

Ըստ երևույթին Թումանյանը՝ Բելինսկու երկերում տրված ռուսական կյանքի պատմական նկարագրությունները հայ «կյանքի որոշ շրջաններին» հետ է համեմատում՝ գտնելով «զարմանալի» նմանություններ, բոլոր իրոր որ կան: Դժբախտաբար Թումանյանը կոնկրետ չի ասում, թե ինքը ո՞ր ազգերի կյանքը նկատի ունի և թե ի՞նչ նմանությունների մասին է խոսքը,— բայց այնուամենայնիվ, նրա այդ արտահայտությունները վկայում են այն խորը իմացական-հասնաշողական նշանակության մասին, որ ունեցել են ռուս մեծ քննադատի ու զեղադատի երկերը հայ բանաստեղծի մտավոր զարգացման, նրա պատմա-հասարակական և գրական ու գեղագիտական հայացքների կազմակերպման ու ձևավորման համար:

Հաստատորեն կարելի է ասել, որ թեև գրականության—պոեզիայի ժողովրդագրության ստեղծագործական պրակտիկան Թումանյանը սովորել է Պուշկինից, ապա անկասկած է, որ գրականության, արվեստի ժողովրդայնության թևերին նա յուրացրել, ըմբռնել է Բելինսկու երկերի, մասնավորապես՝ Պուշկինի ստեղծագործության մասին նրա նշանավոր հոգևածաշարքի լուրջ ուսումնասիրությամբ:

Դրա համար իբրև վկայություն, հիշենք հետևյալը: Իր նամակներից մեկում՝ դարձյալ գրված 1904 թ. ամսուր (օգոստ.), Թումանյանը նշում է, որ իր «գլխավոր արժանիքը» այն է, որ նա իր «ժողովրդի թշվառության հրդիչն է, թախծի, վշտի բանաստեղծը» և որ նրա ստեղծագործության հիմնական աղբյուրն ու առարկան իր հայրենիքի— ժողովրդի կյանքն է՝ «հայկական կյանքը, հայկական աշխարհը»: Հայտնելով այդ միտքը, որն առնչվում է Բելինսկու հայացքների հետ՝ Թումանյանը անմիջապես շարունակում է.

«Բելինսկին ասում է՝ բանաստեղծի մեծությունը ամենից առաջ կայանում է նրա ժողովրդական լինելու մեջ (народность)։ Ամենից առաջ ամեն բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պետք է լինի»,—¹ ասում է Թումանյանը յուրովի՝ շարադրելով Բելինսկու միտքը, գրողի ու գրականության ժողովրդայնության մասին:

«Սակայն,— ավելացնում է Թումանյանը,— նրանից հետո կա մի ուրիշ մեծ խնդիր: Ելնելով դարձյալ Բելինսկու մտքերից Թումանյանը նշում է, որ գրականության ժողովրդայնության հարցը օրգանապես կապված է իր նկատի առած «մեծ խնդրի» հետ ու պայմանավորված է նաև այդ խնդրի ճիշտ ըմբռնումով ու կիրառումով գրական ստեղծագործության մեջ: Այդ «մեծ խնդրին» այն է, թե որքան է բանաստեղծը ազգային, իր ժողովրդայնությամբ հանդերձ: Թումանյանի գրական-քննադատական հոգևածաներում գրողի ու գրականության ժողովրդայնության և ազգայնության (народность, национальность) հարցերը շատ կարևոր տեղ են գրավում, ըստ որում կարող ենք վրձնականորեն ասել, որ այդ հարցերը Թումանյանն ըմբռնում ու մեկնաբանում է ըստ Բելինսկու և իր ստեղծագործական պրակտիկայում նա ժողովրդային և ազգային է ճիշտ այնպես, ինչպես այդ հասկանում էր ու բացատրում Բելինսկին՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի ստեղծագործության օրինակներով:

¹ Հովհ. Թումանյան—Երկերի ժողովածու, հ. V, էջ 289:

Թումանյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել նաև ռուս ժողովրդի հարուստ բանավոր ստեղծագործության նկատմամբ: Անչափ սիրելի ու բարձր է գնահատել ռուսական հեքիաթները, որոնցից նաև փոխադրել ու թարգմանել է մի քանիսը՝ «Գեղեցկուհի Վասիլիսան» (1913) և «Կարմիր ծաղիկը» (1916) և այլն: Հավատարիմ մնալով դրանց բնագրերի ռուսական ժողովրդական ազգային ոգուն, Թումանյանն իր ստեղծագործական տաղանդի կնիքն է դրել այդ հեքիաթների թարգմանության վրա:

Բայց հեքիաթներից շատ ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Թումանյանը ռուսական բրիխանների՝ ժողովրդական վիպերգության նկատմամբ և թարգմանել է երկու հատված՝ «Մուրոմցի Իլիան կոպում է Վլադիմիր իշխանի հետ» (1908 թ.) և «Սվյատագորը» (1913 թ.):

Ռուսական ազգային էպոսում Թումանյանին դրավել է բրիխանների գաղափարական բովանդակությունը, այն, որ բրիխանների հերոսների կերպարներում մարմնավորված է ժողովրդի անպարտելի ուժը:

Հետաքրքրական է Թումանյանի արտահայտած կարծիքը ընդհանրապես ազգային էպոսների և մասնավորապես ռուսական բրիխանների մասին:

«Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ,— գրում է Թումանյանը 1917 թ.¹ ցարիզմի տապալման օրերին, փետրվար-մարտյան ռևոլյուցիան բնութագրելով իբրև «հսկայի ազատություն»:

Թումանյանի պատկերացման մեջ հսկան՝ իր ազգային էպոսում մարմնավորված ռուս ժողովուրդն է, որն ազատագրվում է՝ ցարիզմի տապալումով: Պատմական այդ մեծ իրադարձությունը Թումանյանը դիտում է իբրև ռուս ժողովրդի առաջընթաց անպարտելի ուժի արտահայտություն, իսկ ռուսական էպոսում նա տեսնում է ռուս ժողովրդի ազգային հերոսական կերպարի դեղարվեստական խտացումը:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ անդրադառնալով իրար դեմ դուրս եկած ազգերի էպոսներին և բացահայտելով նրանցից ամեն մեկի գլխավոր հերոսի ազգային հիմնական հատկանիշը՝ իսկական մարդկայնություն, հերոսականություն, ազատասիրության ու ազնիվ մարդասիրության գծեր տեսնում է ամենից ավելի ռուսական ազգային էպոսի գլխավոր հերոսի կերպարի մեջ:

«Եվ որովհետև,— գրում է Թումանյանը,— ամեն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մեջ՝ ամենայն համարձակությամբ կարող ենք չլսել ասենք, թե՛ ազգերի դուրսագոյությունը— սերբիական Մարկոն, դերմանական Զիգֆրիդը, ֆրանսիական Ռուլանդը, անգլիական Բեռտլուֆն ու ռուսական Սուրոմցի Իլիան են առասպելների աշխարհից դուրս եկել մեր առաջ ու մենք հանդիսատես ենք հսկաների կոպին: Եվ տեսեք, թե ինչքան հարագատ են դժված ու բնորոշված սրանցից ամեն մեկը»:

Իսկ ինչո՞ւ են հատկանշվում այդ «ազգերի դուրսագոյությունը»:

«Ահա գեղեցիկ... Զիգֆրիդը, վեր է կացել՝ ձեռքին չեղած ամուրյան էն սուրը, որ դարձնել էր աշխարհի ամեն զանգեղ մեծակ տիրապետելու համար...»:

«Ահա անգլիական Բեռտլուֆը, որ լողալու արտասովոր ընդունակություն

ունի և մայր ցամաք է դուրս գալիս... մի վիշապի դեմ, նրան խոհուակելու և նրա հավաքած աֆեոն զանձերը իր ազգին առնելու համար...»:

«Ֆրանսիական քաջարի Ռոլանդը... օգնության է կանչում ֆրանսիական ազգային զորությունը, պաշտպանելու շքնաղ Ֆրանսիան...»:

Շատ ակնհայտ և էական տարբերություններ տեսնելով գերիշխանությունն ունեցող և նվաճողական քաղաքականություն վարող ազգերի (գերմանական և անգլիական) և փոքր ժողովուրդների ազգային էպոսների գաղափարական բովանդակության, նրանց հերոսների քաղաքական-քաղաքական կերպարների միջև, Թումանյանը՝ ի տարբերություն գերմանականի ու անգլիականի սերբական ազգային դույզազների կերպարի մեջ նշում է նրա հերոսականությունը, բայց անզորությունն ու անօղակամությունը՝ իր դեմ կանգնած ավելի մեծ թշնամու համեմատությամբ: Նա՝ «սերբական ըմբոստ կտորի՞ն Մարկոն՝ իր Շարասյի վրա, աջ ու ձախ ջարդելով խորը մխվել է՝ սերբական ազգից շատ ավելի ուժեղ թշնամու բանակը, լուրում է արյան մեջ ու աղաղակում է՝ էլ ի՞նչ անեմ...»:

Բոլոր այդ «ազգերի դույզազներից», — ասում է Թումանյանը, — հիմնովին տարբերվում է ռուսական ազգային դույզազը: «Ահա վերջապես և ռուսական վիքխարի գյուղացին, ծերուկ Իլիա Մուրոմցին, հայրենիքին սպառնացող վտանգի առջև՝ Владимир Красное Солнышко-ից, իշխանավորից զուր տեղն իրեն հասած վիրավորանք մոռացության տալով՝ իր հսկայական զուրգն առած՝ գնում է անմեղ ժողովուրդն ու երկիրն ազատելու վայրագ քրքնամու արշավանքից: Գնում է անհոգ, հանդարտ ու բարի, բայց հզոր ու հաստատուն: Գնում է իր «ախպերացունքի» նետ»:¹

Թումանյանն այն կարծիքն ունի, թե ռուսական ազգային էպոսը չի ամբողջացել, նրա առանձին մասերը չեն միացել մի միասնական գեղարվեստական կառուցվածքով:

Բայց շնայած դրան, — ասում է Թումանյանը, — ռուս ժողովուրդն իր էպոսի հատվածներում՝ բրինձներում լիովին ցուցաբերել է իրեն՝ իր ազգային բնավորության էական, ու բնորոշ գծերով:

«Բայց տեսեք, թե նրա մասերում — ОБЛИНА-ներում՝ ի՞նչ վեսեմ պարզությամբ ու ինչքան հոյակապ տալիս է իրեն պատկերը», — հիացմունքով ասում է Թումանյանը՝ նկատի ունենալով Իլիա Մուրոմցու մասին եղած վիպերգությունը, որի բովանդակությունը նա շարադրում ու մեկնաբանում է իր վերոհիշյալ հոդվածում:²

Թումանյանը ռուսական բրինձների հերոսների կերպարներում նկատում ու նշում է ռուս ժողովրդի՝ հնագույն ժամանակաշրջանում ասպրած սպառնական զարգացման տարբեր դարաշրջանների արտահայտությունը:

«Սվյատագորը ռուսաց ОБЛИНА-ներում, ավագ հսկաներից միսն է, էն կոպիտ ուժն է, որ թափառական շրջանն է ներկայացնում, իսկ Միկոլա Սելանինովիչը (շինական) էն հսկա երկրագործն է, որ համարվում է նստակյաց գեղըրդ աշխարհի նախահայրը: Սրա երևալով Սվյատագորը տեղի է տալիս ու մեռնում», — գրում է Թումանյանը, ծանոթագրելով իր թարգմանած

¹ «Թումանյանը՝ բնագրում», էջ 317—318. («Ազգերի սրտերազմն ու իրենց դույզուկները»):

² Նույն տեղ, էջ 412 («Հսկայի աղափությունը»):

Սվլատագորը հատվածը: Իսկ Մուրոմցի Իլիան, ժողովրդական ուժի գաղափարն է մարմնավորում,— գրում է Թումանյանը:¹

Հետագա լուրջ գիտական հետազոտությունն արժանի հարց է այն, թե ինչքան մեծ ու խորը ազդեցություն է ունեցել ուսուս կլասիկ գրականությունը մասնավորապես Թումանյանի վրա, ազդեցություն, որը ոչ թե նվազեցրել, այլ ավելի ցայտուն է դարձրել նրա ստեղծագործության ազգային ինքնատիպությունը:

Սովորելով ուսուս մեծ բանաստեղծներից՝ Թումանյանը հետզհետե ավելի ու ավելի խորն է գիտակցել իր կոչումը, որպես իր ժողովրդի ազգային բանաստեղծի, իր ժողովրդի իրական կյանքը և աղատագրական իղձերը պատկերելու՝ նրան հարազատ լեզվով ու ոճով:

Թումանյանի ստեղծագործությունը մի ցայտուն օրինակ է այն բանի, որ արտաքին ազդեցությունը (խոսքը իհարկե պրոգրեսիվ գրականության թողած ազդեցության մասին է) իր ժողովրդի հետ օրգանապես կապված իսկական բանաստեղծին ավելի ինքնատիպ է դարձնում՝ թե՛ ազգային, և թե՛ ժողովրդական գծերի զարգացման իմաստով: Պուշկինի ու Լերմոնտովի բարերար ազդեցության շնորհիվ Թումանյանն ավելի ինքնատիպ, ավելի ցայտուն ազգային ու ժողովրդային է դարձել իբրև հայ ժողովրդի բանաստեղծ:

Կարելի է հաստատապես ասել, որ առանց ուսուս կլասիկ գրականության բարերար ազդեցության, Թումանյանը չէր հասնի ինքնատիպ բանաստեղծի այն փառքին, որին իրավամբ հասել է նա իր ստեղծագործական կյանքի մեծ ճանապարհին:



A 31408
27559

¹ Հավ. Թումանյանի ներկերի ժողովածու հ. 2, էջ 444:

ՀԱՅ ՀԻՍՏՈՐԻԱԳՐԱԳԻՏ. ԳՐԱԴ.



220031708

[204]

